ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«____» _____ 20 թ.

No _____

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կենտրոնական մաքսային մարմինների միջև «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի 5.7 հոդվածի համաձայն տեղեկությունների փոխանակման իրագործման մասին» արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին արձանագրության ստորագրման նպատակահարմարության մասին

«Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կենտրոնական մաքսային մարմինների միջև «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 5.7 հոդվածի համաձայն տեղեկությունների փոխանակման իրագործման մասին» արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2018 հունիսի 28-ին Բրյուսելում:

Համաձայնագրի 5.7-րդ հոդվածը նախատեսում ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային մարմինների և Վիետնամի միջև էլեկտրոնային տեղեկատվության կանոնավոր կերպով փոխանակում: ԵԱՏՄ անունից Եվրասիական տնտեսական հանձնաժողովն է ապահովելու էլեկտրոնային տեղեկատվության փոխանակման ստեղծման գործընթացի համակարգումը և նպաստելու դրա կիրառմանը:

Արձանագրության նորմերը նախատեսում են էլեկտրոնային տեղեկատվության փոխանակման փուլային ներդրում՝ ինտեգրացիոն տեղեկատվական համակարգի միջոցով: Սկզբնական շրջանում այն վերաբերվելու է կոնկրետ ապրանքներին, որի հաջող կիրառման դեպքում տեղեկատվության փոխանակման իրագործումը կտարածվի բոլոր ապրանքների վրա:

Տեղեկատվության կանոնավոր փոխանակման գործընթացը կնպաստի ապրանքների մաքսային ձևակերպումների գործընթացի արագացմանը, ինչպես նաև հնարավոր խախտումների արագ բացահայտմանը:

2018թ. հոկտեմբերից սկսվել է որոշ ապրանքատեսակների մասին տեղեկատվության փորձնական փոխանակման գործընթացը: Արձանագրության 3-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն էլեկտրոնային հաղորդակցության երկրորդ փուլի

իրականացումը նախատեսվում է սկսել 2019թ. հոկտեմբերից, միաժամանակ ընդլայնվելու է տեղեկատվության փոխանակման ենթակա ապրանքների ցանկը: 2021 թ. հոկտեմբերից նախատեսվում է սկսել էլեկտրոնային տեղեկատվության փոխանակման երրորդ փուլը՝ ԵԱՏՄ և Վիետնամի միջև շրջանառվող բոլոր ապրանքների նկատմամբ:

Արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին սույն արձանագրության նախագիծը մշակվել է տեղեկատվության փոխանակման երկրորդ փուլի իրականացման նախապատրաստման նպատակով և ներառում է այն ապրանքների ցանկը, որոնց մասին տեղեկատվության փոխանակումը նախատեսվում է իրականացնել էլեկտրոնային հաղորդակցության երկրորդ փուլի շրջանակներում:

Արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին սույն արձանագրության նախագծում Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական պարտավորություններ նախատեսող, եկամուտների նվազեցման կամ ծախսերի ավելացման հանգեցնող դրույթներ առկա չեն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն նպատակահարմար է գտնում «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կենտրոնական մաքսային մարմինների միջև «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի 5.7 հոդվածի համաձայն տեղեկությունների փոխանակման իրագործման մասին» արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին արձանագրության ստորագրումը:

Recoverable Signature

X

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

Դ. ԱՆԱՆՅԱՆ